ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16/05

ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ
2013-2015թթ. Ընդհանուր Ժողովի

ք. Երևան 24 սեպտեմբերի 2016թ.

Օրակարգ՝

1. Օրակարգի հաստատում
2. Նախագահի հաշվետվություն
3. Նախագահի հաշվետվության հաստատում
4. Տնօրենի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվություն
5. Տնօրենի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվության հաստատում
6. Վարչության որոշումների հաստատում
7. Նոր նախագահի ընտրություն
8. Նոր վարչության ընտրություն
9. Նոր վերստուգիչ հանձնաժողովի ընտրություն
10. Ելույթներ

248 գործող անդամներից ներկա էին 103 անդամ և փոխանցված՝ 98 ձայն:

Մասնակիցների ցուցակը կցված է արձանագրությանը:

Ժողովի սկզբում նախագահ ընտրվեց Գրիգոր Սաղյանը, քարտուղար՝ Լիաննա Գալստյանը:

1. Օրակարգի հաստատում

Ժողովի նախագահը ներկայացրեց օրակարգը, որը հաստատվեց բոլոր ներկա մասնակիցների կողմից: Այնուհետև որոշվեց հաշվետվությունների ժամանակը չսահմանել, իսկ ելույթների համար նախօրոք հերթագրվել՝ մինչև 5 րոպե ժամանակով:

2. Նախագահի հաշվետվություն

Նախագահը ողջույնի խոսք հղեց բոլոր ներկաներին և սկսեց իր 2013-2015 թթ-ի հաշվետվությունը՝ ներկայացնելով ԻՀ ՀԿ-ի գործունեության հիմնական ուղղությունները, isoc.am կայքում տեղ գտնող նորությունները, ԻՀ ՀԿ-ի կողմից պատվիրված սոցիոլոգիական հարցման արդյունքները Հայաստանում ինտերնետի ներթափանցման մասին: Նա նշեց ԻՀ ՀԿ-ի կողմից կազմակերպված միջազգային INET 2013 կոնֆերանսի մասին, ինչպես նաև ArmNET 2013, 2014, 2015 կոնֆերանսներին ԻՀ ՀԿ համաֆինանսավորման մասին: Իգոր Մկրտումյանը ներկայացրեց այն նախագծերը, որոնց իր մասնակցությունն է ունեցել ԻՀ ՀԿ-ն, օրինակ՝ «Պատանի տեխնիկներ» նախագիծը Վանաձորում, NASA Space Apps Challenge Armenia 2016 միջոցառման հովանավորում, Կույրերի ու թույլ տեսողություն ունեցողների Ինտերնետի հասանելիության կենտրոնում

«Ինտերնետ ռադիո» նախագծի աշխատանքներին աջակցում, գյուղական գրադարաններում համակարգիչների և գրադարանային ծրագրերի նվիրաբերում և այլն:

Պարոն Մկրտումյանը ներկայացրեց նոր Ռեգիստրար ընկերությունների ցանկը, որոնք իրավունք են ստացել .am տիրույթում գրանցումներ կատարելու: Այնուհետև, ԻՀ ՀԿ նախագահը խոսեց հայկական համայնքի համար խիստ կարևոր մի նախագծի՝ հայատառ .հայ տիրույթի գործարկման մասին:

Հաշվետվության մեջ պարոն Մկրտումյանն անդրադարձավ նաև հայկական Ինտերնետ կառավարման համաժողովին, որը առաջին անգամ կազմակերպվել էր 2015թ. սեպտեմբերին ԻՀ ՀԿ-ի կողմից՝ Ինտերնետ կառավարման միջգերատեսչական հանձնաժողովի և ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության աջակցությամբ:

Իգոր Մկրտումյանը նաև նշեց ԻՀ ՀԿ-ի համագործակցությունը տարբեր կազմակերպությունների հետ, ինչպես նաև անդամակցությունը բազմազան տեղական և միջազգային կազմակերպություններին:

Ինչպես նաև անդրադարձ եղավ ԻՀ ՀԿ նոր անդամների անդամակցության թվի աճին և նոր անդամների հետ կազմակերպված հանդիպումներին:

Ամփոփելով ելույթը՝ պարոն Մկրտումյանը ներկայացրեց գործող կանոնադրության փոփոխության անհրաժեշտությունը:

Նախագահի մանրամասն հաշվետվությունը կցված է արձանագրությանը:

3. Նախագահի հաշվետվության հաստատում

Քվեարկության դրվեց կատարված աշխատանքների մասին Ինտերնետ Հանրության նախագահի հաշվետվությունը բավարար համարելու առաջարկը և միաձայն ընդունվեց:

Որոշում: *ԻՀ ՀԿ նախագահի 2013-2015 թթ.. հաշվետվությունը ընդունել, և աշխատանքը բավարար համարել:*

4. Տնօրենի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվություն

ԻՀ ՀԿ տնօրեն Արման Ներսիսյանը ողջունեց բոլոր ներկաներին, նշեց, որ վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը տրամադրվել է մասնակիցներին, և հարցերի դեպքում նա պատրաստ է մեկնաբանել և պատասխանել բոլոր հարցերին: Պարոն Ներսիսյանը նշեց, որ նախագահը մանրամասն ներկայացրեց կատարված աշխատանքները, այդ պատճառով ավելի նպատակահարմար է, որպեսզի նա ներկայացնի նախատեսվող գործունեության ծրագրերը և ԻՀ ՀԿ-ի աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ իր տեսլականը: Այն է.

- .am և .հայ դոմեններում գրանցումների զգալի աճ ապահովելու համար անհրաժեշտություն կա կիրառել ինչպես ժամանակակից մարկետինգային գործիքներ, այնպես էլ արդի միջազգային պահանջներին համապատասխան՝ տեխնիկական և ծրագրային վերազինում:
- Իրավաբանական հարցերի լուծման համար անհրաժեշտ է մշակել հայեցակարգ միջոցառումների ցանկ, որը կընդգրկի դոմենների գրանցման հետ կապված հասկացությունների հստակեցում և սահմանում, ինչպես նաև վիճահարույց դոմենների հետ կապված վեճերի լուծման առավել արդյունավետ մեթոդների կիրառում՝

ներգրավվելով համապատասխան ոլորտների փորձագետներին, օգտագործելով օրենսդրությամբ նախատեսված դատական, արբիտրաժային, հաշտարարական և այլ, հանրության կողմից ընդունելի եղանակներով:

- Դոմենների գրանցման արդյունավետությունը բարձրացնելու համար ժամանակն է անցում կատարել դոմենների ավտոմատ գրանցման համակարգի, որի սկիզբը կդրվի 2017թ-ին, իսկ ռեգիստրարներին կներկայացվեն լրացուցիչ տեխնիկական և ծրագրային պահանջներ՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը:
- Ռեգիստրարների համար ակրեդիտացիայի պայմանների հստակեցում, ինչի հետևանքով կառաջանա անհրաժեշտություն պարզեցնել գրանցող կազմակերպությունների և վերջիններիս գործակալ վերավաճառողների կարգավիճակը, օգտվողների կողմից ռեգիստրար փոխելու հնարավորության ապահովման համար: Ներկայումս կան որոշակի քանակի ռեգիստրարներ, որոնց համար տեխնիկական նոր չափանիշների ներդրումը դոմենների գրանցման համար կարող է տնտեսապես ձեռնտու չլինել՝ գրանցված դոմենների սակավության պատճառով: Այս պարագայում նրանք կարող են դիտարկվել որպես ակրեդիտացված վերավաճառողներ՝ ցանկության դեպքում WHOIS բազայում ներկայացնելով նրանց տվյալները: Այս պարագայում առանցքային նշանակություն ունի ռեգիստրարների կողմից գրանցված անձանց պահուստային տվյալների պահպանման խնդիրը, որի լուծման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել միջոցառումների ցանկ:
- ԻՀ ՀԿ կողմից դոմենների գրանցման քաղաքականության զարգացման անհրաժեշտությունն այսօր հանդիսանում է առավել առանցքային խնդիր, այս առումով հարկ է քաղաքականության զարգացման հարցը դարձնել օրակարգային վարչության առաջիկա նիստերի համար:
- Վարչության արդյունավետ աշխատանքի համար առաջարկվում է ԻՀ ՀԿ կանոնադրությամբ նախատեսված Ինտերնետի զարգացան համար ձևավորել աշխատանքային խմբեր, որոնք կմշակեն իրենց տեսլականը և կլինեն այս ուղղությունների պատասխանատու խմբերը: Ամեն աշխատանքային խմբի ներկայացուցիչը այս պարագայում բնականոն կերպով իրավասու կլինի ընդգրկվել վարչության կազմում: Վարչությունը անհրաժեշտ է ձևավորել հենց այդ սկզբունքով: Առանցքայի ուղղություններից են մասնավորապես երեխաների առցանց պաշտպանությունը, հայատառ .հայ դոմենի տարածումը ողջ հայության համար, սահմանափակ հնարավորություններով անձանց աջակցությունը Ինտերնետ հասանելիության ապահովմամբ, Ինտերնետի համայնքի կրթումը, ԱՐՄԻՔՍ հիմնադրամին աջակցությունը՝ մարզային օպերատորների ներգրավմամբ: Իհարկե, վարչության կողմից առաջարկվելիք այլ ուղղությունների մշակումը հանդիսանում է կարևորագույն հարց:
- Բազմաշահառու մոտեցման իրականացման նպատակով հուշագրերի կնքում բոլոր շահագրգիռ կառույցների հետ, այդ թվում Առևտրաարդյունաբերական պալատի, տարբեր ՀԿ-ների, կոմերցիոն կառույցների, պետական մարմինների և գործակալությունների հետ:
- ԻՀ ՀԿ-ի առավել արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով 2017–ի ընթացքում նախատեսել Ինտերնետ պորտալի գործարկում՝ ԻՀ ՀԿ-ի կայքի արմատական բարելավում՝ խմբագրական կոլեգիայի ստեղծմամբ: Ինտերնետ պորտալի առավելություններից մեկն այն է, որ ԻՀ ՀԿ անդամների և ԻՀ ՀԿ-ի միջև կապահովվի ինտերակտիվ կապ, բացի այդ ՀԿ գործող օրենքի համաձայն 100 և ավելի անդամներ ունցող ՀԿ-ների համար հնարավոր է ներդնել պատվիրակների ինստիտուտը, ըստ որի ձայների փոխանցման պրակտիկան կփոխարինվի

առաջադրված պատվիրակների առցանց ընտրման գործընթացով: Աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ներդնել ժամանակակից CRM համակարգ:

- Աշխատանքի պրոցեսը առավել թափանցիկ կազմակերպելու համար անհրաժեշտ է անցնել որակի կառավարման ISO 9001 ստանդարտին, ինչպես նաև ներդնել արդի պահանջներին համապատասխանող ինֆորմացիոն անվտանգության ISO 27001 ստանդարտը:

Պարոն Ներսիսյանը նշեց, որ բացի ներկայացված զարգացման ուղղություններից անդամների կողմից նոր առաջարկները ողջունվում են, այդ առաջարկների քննարկումը ԻՀ ՀԿ–ում թույլ կտա զարգացնել նոր ուղղություններ: Ինչպես նաև նա նշեց, որ ակնկալում է անդամների և վարչության ակտիվ մասնակցությունը, առաջարկությունների ներկայացման և քննարկման հարցում:

ԻՀ ՀԿ տնօրենը նշեց, որ ներկայացված ուղղությունների իրականացման համար անհրաժեշտ է համարում ներգրավել փորձագետների, որպեսզի մշակվի առավել արդյունավետ մարտավարություն և կարևորագույն հարցերի վերաբերյալ ընթացակարգեր:

Ամփոփելով իր ելույթը՝ պարոն Ներսիսյանը նշեց գործող ռեգիստրարներից վերջին տարիներին ակտիվ աշխատանք կատարած ընկերության՝ Գլոբալ Էյէմ ընկերության հաջողությունները, որի կողմից իրականացված մարկետինգային ակտիվության հետևանքով մոտ 27%-ով աճել է .am տիրույթում գրանցված դոմենների քանակը և քաջալերելով նրանց աշխատանքը՝ ԻՀ ՀԿ-ի անունից նվեր հանձնեց այդ ընկերության տնօրեն Քրիստինա Հակոբյանին:

5. Տնօրենի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվության հաստատում

Լսելով ԻՀ ՀԿ տնօրեն Արման Ներսիսյանի հաշվետվությունը և հաշվի առնելով ներկայացված վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվություն առնչությամբ հարցադրումների բացակայությունը՝ ժողովն անդրադարձավ օրակարգի 5-րդ հարցի քննարկմանը:

Քվեարկության դրվեց տնօրեն Արման Ներսիսյանի կատարած աշխատանքները և վերստուգիչ հանձնաժողովի ներկայացրած հաշվետվությունը բավարար համարելու հարցը, որն էլ միաձայն կողմ ընդունվեց:

Որոշում: *Հաստատել ԻՀ ՀԿ տնօրենի և վերստուգիչ հանձնաժողովի 2013-2015 թթ.. հաշվետվությունը:*

Որոշում: *Հաստատել ԻՀ ՀԿ տնօրենի կողմից ներկայացված գործողությունների ծրագիրը:*

Վերստուգիչ հանձնաժողովի կողմից պատրաստված ակտը կցվում է սույն արձանագրությանը:

6. ԻՀ Վարչության որոշումների հաստատում

Ժողովի քարտուղար Լիաննա Գալստյանը բոլոր մասնակիցներին ներկայացրեց ԻՀ վարչության կողմից 2013-2016թթ.. ընթացքում կայացրած որոշումները:

Ժողովի մասնակիցները քննարկում սկսեցին որոշումներից մեկի վերաբերյալ. այն է՝ Ինտերնետ Հանրության Նախագահը ընտրվում է Վարչության կազմից՝ պարզ մեծամասնությամբ: Քանի որ սույն որոշումը ենթադրում էր Կանոնադրության կետի փոփոխություն, հրավիրված

իրավաբանի մեկնաբանությամբ սույն որոշումը կարող էր ընդունվել ի գիտություն՝ առանց որոշումից բխող փոփոխության:

Ներկայացված որոշումները, բացառությամբ ԻՀ ՀԿ Նախագահի ընտրության մասին փոփոխության որոշման դրվեցին քվեարկության: Վերոնշյալ որոշումները կցված են սույն արձանագրությանը:

Քվեարկության դրվեց ԻՀ ՀԿ Վարչության որոշումները հաստատելու հարցը, որն ընդունվեց միաձայն՝ բացառությամբ մեկ որոշման, որն ընդունվեց ի գիտություն:

Որոշում: *Հաստատել 2013-2016 թթ..-ի ընթացքում ԻՀ ՀԿ Վարչության կողմից ընդունված որոշումները, բացառությամբ այն որոշման, ըստ որի Ինտերնետ Հանրության Նախագահը ընտրվում է Վարչության կազմից՝ պարզ մեծամասնությամբ:*

7. Նոր Նախագահի ընտրություն

ԻՀ ՀԿ Նախագահի ընտրության կետին անդրադառնալիս որպես թեկնածու առաջադրվեց գործող նախագահ Իգոր Մկրտումյանը:

Առաջադրված Իգոր Մկրտումյանի թեկնածությունը քվեարկության դրվեց և ընդունվեց միաձայն:

Որոշում: *Հաստատել Ինտերնետ Հանրության Նախագահի պաշտոնում Իգոր Մկրտումյանի թեկնածությունը:*

8. Նոր Վարչության ընտրություն

Ժողովի քարտուղար Լիաննա Գալստյանը ներկայացրեց, որ գործող վարչությունը, բացառությամբ Ինեսա Խոլոդովայի և Հրաչյա Աբովյանի, թվով 21 անդամ, պատրաստակամություն է հայտնում շարունակել իր աշխատանքը վարչության կազմում:

Իգոր Մկրտումյանն առաջարկեց ԻՀ վարչության կազմում ընդգրկել նաև Ինտերնետ Հանրության տնօրեն Արման Ներսիսյանին, Արմիքս հիմնադրամի տնօրեն Վահան Հովսեփյանին, Յուքոմ ընկերության անվտանգության բաժնի ղեկավար Կարեն Գասպարյանին, ՋիԷնՍի-Ալֆա ընկերության ցանցային ադմինիստրատոր Միսակ Խաչատրյանին, Արփինետ ընկերության տնօրեն Արմեն Մուրադյանին և «Իդրամ» վճարային համակարգի հիմնադիր Գևորգ Պողոսյանին:

Կոլյա Հովհաննիսյանն առաջարկեց ԻՀ վարչության կազմում ընդգրկել նաև Վիվասել ընկերության տեղեկատվական բաժնի պատասխանատու Թոմաս Մազեջյանին, Հարմոնիա ծրագրի ղեկավար Մուրադ Մուրադյանին և Հելիքս ընկերության տնօրեն Արամ Մխիթարյանին:

Բոլոր առաջարկված թեկնածությունները քվեարկության դրվեցին և բոլորը կողմ, 2 ձեռնպահ ձայնով ընդունվեցին մասնակիցների կողմից:

Որոշում: *Ինտերնետ Հանրության վարչության գործող կազմը թողնել նույնը, իրենց դիմումի համաձայն հեռացնել Ինեսա Խոլոդովային և Հրաչյա Աբովյանին: Վարչության կազմում ընդգրկել նոր անդամներ՝ Արման Ներսիսյանին, Վահան Հովսեփյանին, Կարեն Գասպարյանին, Միսակ Խաչատրյանին,*

Արմեն Մուրադյանին, Գևորգ Պողոսյանին, Թոմաս Մազեջյանին, Մուրադ Մուրադյանին և Արամ Մխիթարյանին:

Առաջարկ եղավ առաջիկա վարչության ժողովին քննարկել վարչության կազմի քանակի հարցը և լրամշակել այն Կանոնադրության մեջ:

9. Վերստուգիչ հանձնաժողովի ընտրություն

Գրիգոր Սաղյանն առաջարկեց թողնել ԻՀ վերստուգիչ հանձնաժողովի կազմն անփոփոխ, եթե չկան այլ առաջարկություններ: Այլ առաջարկներ չհնչեցին:

Առաջարկը քվեարկության դրվեց և միաձայն կողմ ընդունվեց:

Որոշում: *Ինտերնետ Հանրության վերստուգիչ հանձնաժողովի կազմը թողնել անփոփոխ:*

10. Ելույթներ

Նախագահության խնդրանքով ժողովին ներկա իրավաբանը ամփոփ ներկայացրեց նոր խմբագրությամբ Կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը:

Մասնակիցները ներկայացված նախագիծն ընդունեցին ի գիտություն և հանձնարարեցին վարչությանը պատրաստել նոր խմբագրությամբ կանոնադրություն ոչ ուշ, քան երեք ամիս ժամկետում: Մասնակիցները համաձայնության եկան, որ քվեարկությունը կարող է իրականացվել էլեկտրոնային եղանակով:

Որոշում: *Հանձնարարել Ինտերնետ Հանրության վարչությանը պատրաստել նոր խմբագրությամբ կանոնադրություն ոչ ուշ, քան երեք ամիս ժամկետում:*

Գրիգոր Վահանյանը ելույթով հանդես եկավ՝ նշելով չորս կարևոր հարցեր.

1. ԻՀ նախագահի և փոխնախագահների կատարված աշխատանքների արդյունքում նկատելի ավելացել է ԻՀ անդամների կազմը, ինչը ողջունելի է բոլորի կողմից:
2. SS զարգացման հարցում ԻՀ ՀԿ դերակատարումը պետք է ավելի լուրջ և ընդգրկուն լինի:
3. Անհրաժեշտ է իրականացնել .հայ տիրույթի զարգացումը:
4. Տեղեկություններ տարածել տարբեր միջոցառումների մասին, որոնց կարող են մասնակցել ԻՀ անդամները:

Ինտերնետ Հանրություն ՀԿ-ի 2013-2015թթ.. ընդհանուր ժողովի ընթացքում ընդունված որոշումները՝

1. *ԻՀ ՀԿ նախագահի 2013-2015 թթ.. հաշվետվությունը ընդունել, և աշխատանքը բավարար համարել:*
2. *Հաստատել ԻՀ ՀԿ տնօրենի և վերստուգիչ հանձնաժողովի 2013-2015 թթ.. հաշվետվությունը:*
3. *Հաստատել ԻՀ ՀԿ տնօրենի կողմից ներկայացված գործողությունների ծրագիրը:*

4. *Հաստատել 2013-2016 թթ..-ի ընթացքում ԻՀ ՀԿ Վարչության կողմից ընդունված որոշումները, բացառությամբ այն որոշման, ըստ որի Ինտերնետ Հանրության Նախագահը ընտրվում է Վարչության կազմից՝ պարզ մեծամասնությամբ:*
5. *Հաստատել Ինտերնետ Հանրության Նախագահի պաշտոնում Իգոր Մկրտումյանի թեկնածությունը:*
6. *Ինտերնետ Հանրության վարչության գործող կազմը թողնել նույնը, իրենց դիմումի համաձայն հեռացնել Ինեա Խոլոդովային և Հրաչյա Աբովյանին: Վարչության կազմում ընդգրկել նոր անդամներ՝ Արման Ներսիսյանին, Վահան Հովսեփյանին, Կարեն Գասպարյանին, Միսակ Խաչատրյանին, Արմեն Մուրադյանին, Գևորգ Պողոսյանին, Թոմաս Մազեջյանին, Մուրադ Մուրադյանին և Արամ Մխիթարյանին:*
7. *Ինտերնետ Հանրության վերստուգիչ հանձնաժողովի կազմը թողնել անփոփոխ:*
8. *Հանձնարարել Ինտերնետ Հանրության վարչությանը պատրաստել նոր խմբագրությամբ կանոնադրություն ոչ ուշ, քան երեք ամիս ժամկետում:*

Ժողովի նախագահ՝ Գ. Սաղյան

քարտուղար՝ Լ. Գալստյան